ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ

XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազգային-ազատագրական շարժման խորհրդանիշներից է ականավոր հայդուկապետ, ժողովրդական հերոս Զորավար Անդրանիկ Օզանյանը (1865–1927): Նրա կյանքի ու գործունեության մասին առկա են աղբյուրագիտական հսկայական նյութեր (փաստաթղթեր, օրագրություններ, հուշագրություններ, մամուլի հրապարակումներ), հրատարակվել են բազմաթիվ ուսումնասիրություններ: Բավական է նշել միայն ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակիցներ Գևորգ Ղարիբջանյանի, Համբարձում Կարապետյանի, Ծատուր Աղայանի, Հրաչիկ Սիմոնյանի և այլոց՝ Անդրանիկ Օզանյանին նվիրված մենագրությունները: Այդուհանդերձ՝ Անդրանիկի գործունեության վերաբերյալ հետազոտությունները շարունակվում են: Արխիվներում ու պարբերական մամուլում առկա և դեռևս շրջանառության մեջ չդրված նյութերը պատմաբաններին հնարավորություն են տալիս վեր հանելու Զորավար Անդրանիկի գործունեությանը վերաբերող նախկինում անհայտ նորանոր շերտեր: Նրա խարիզմատիկ անձը և հերոսական գործունեությունը լի է բազմաթիվ դրվագներով, որոնք ուսանելի և դաստիարակչական օրինակ են նորանոր սերունդների համար: Ուստի մեր օրերում առավել քան կարևոր է նրա 150-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների իրականացումը:

Այդ նպատակով 2015 թ. փետրվարի 25-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը կազմակերպել էր հանրապետական գիտաժողով՝ նվիրված Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակին: Այն իրականացվեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Գիտաժողովի բացումը և առաջին նիստը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Ներածական խոսքով հանդես եկավ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը*: Նա համառոտ անդրադարձավ Զորավար Անդրանիկի կյանքին ու գործին, նաև անցած փառավոր մարտական ուղուն՝*

շեշտելով, որ 2015 թ. ոչ միայն Հայոց ցեղասպանության, այլև հայության հերոսական ինքնապաշտպանությունների 100-ամյակների տարելիցներն են: Ուստի խորհրդանշական է, որ տարին սկսում ենք ժողովրդական հերոս Անդրանիկ Օզանյանի հոբելյանի անցկացումով:

ԳԱԱ նախագահության անունից ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը *նշեց, որ հայրենասիրությունն էր Անդրանիկի պատգամը, որը պետք է օրինակ լինի նաև մեր օրերում. «Անդրանիկն ամբողջ կյանքը նվիրել է հայ ժողովրդի ազատագրման գործին և հանդիսանում է անկախ ապրելու մեր ժողովրդի ձգտման մարմնացումը»: ԵՊՀ ռեկտոր, ԳԱԱ թղթակից անդամ* Արամ Սիմոնյանն *էլ համոզմունք հայտնեց, որ յուրաքանչյուր մեծ ու փոքր ժողովուրդ հպարտ կլիներ Անդրանիկի նման հերոս ունենալու համար: «Մեծ է նրա դերը հայ ազատագրական պայքարում, քանզի նա սոսկ սովորական մարդ չէր, այլ հայության ազգային խորհրդանիշ»,– նշեց Ա. Սիմոնյանը: ԳԱԱ ակադեմիկոս* Վլադիմիր Բարխուդարյանն *իր ողջույնի խոսքում ընդգծեց, որ ժողովուրդն է իր զավակներին լավագույնս գնահատողը: Իսկ Անդրանիկն ամենասիրված ժողովրդական հերոսն է: Հայաստանի անկախության համար պայքարում և Արցախյան պատերազմի տարիներին նա մեր ազգային-ազատագրական շարժման խորհրդանիշը դարձավ:*

Գիտաժողովի առաջին նիստում (նիստավար՝ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. թ. Կարեն Խաչատրյան*) ընթերցվեց 5 զեկուցում:*

Պ. գ. դ. Վահան Մելիքյանի *զեկուցման թեման էր «Զորավար Անդրանիկի մասնակցությունը Բալկանյան պատերազմներին»: Զեկուցողը հատուկ շեշտեց, որ Անդրանիկը սերտ կապի մեջ էր բուլղարական ազատագրական շարժման գործիչների հետ: Ուստի օրինաչափ է, որ նա, ինչպես նաև Գարեգին Նժդեհը, հայկական ջոկատով մասնակցեցին 1912–1913 թթ. Օսմանյան կայսրության դեմ բալկանյան ժողովուրդների մղած պատերազմներին: Զեկուցողն ընդգծեց, որ պատերազմներին հայերը մասնակցում էին նաև բուլղարական բանակի այլ ստորաբաժանումների կազմում:*

Ակադեմիկոս Ա. Մելքոնյանը *նորահայտ փաստաթղթերի հիման վրա ներկայացրեց «1918 թ. գարնանը Անդրանիկ Օզանյանի Ջավախք մեկնելու հանգամանքների շուրջ» զեկուցումը: Նա նշեց, որ 1918 թ. գարնանը Ջավախքի հայերը մեծ ոգևորությամբ ընդունեցին Անդրանիկի մուտքը: Սակայն թուրքական ջարդերի հետևանքով Արդահանի շրջանից Ջավախք ապաստանած բազմահազար գաղթականների առկայության պայմաններում երկրամասը հնարավորություն չուներ անհ-*

բաժեշտ պարենով ապահովել Անդրանիկի զորամասի զինվորներին ու նրանց ուղեկցությամբ եկած արևմտահայ գաղթականներին: Ուստի զորավարը ստիպված էր առաջխաղացումը դադարեցնել:

«Զորավար Անդրանիկի գործունեության պատմության դասերը» վերնագրով զեկուցման մեջ պ. գ. դ. Էդիկ Մինասյանն *ասաց, որ այսօր անհրաժեշտ է Անդրանիկի հոբելյանի նշումը, քանի որ հայ ժողովուրդը նրա մեջ է մարմնավորել արևմտահայության փրկությունը: «Եթե հայ ժողովուրդը հերոսական անվանվելու իրավունք ունի, ապա դա Անդրանիկի շնորհիվ է»,– ավելացրեց Է. Մինասյանը:*

Պ. գ. դ. Ռուբեն Սահակյանը *«Հայկական առաջին կամավորական ջոկատի մասնակցությունը Առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական ռազմաճակատի մարտական գործողություններին (1914–1916 թթ.)» խորագրով զեկուցման մեջ նշեց, որ Արևմտյան Հայաստանի տեղանքի փայլուն իմացությունն Անդրանիկը լավագույնս օգտագործեց 1914–1916 թթ. ռազմական գործողությունների ընթացքում: Նրա գլխավորած կամավորական ջոկատը ռուսական զորքի և կազակների աջակցությամբ ապահովեց հայ և ասորի գաղթականների անվտանգ անցումը դեպի ռուսական սահմաններ: Զեկուցողն առաջարկեց ՀՀ-ում փետրվարի 1-ը նշել որպես ռազմական ոստիկանության օր, քանի որ 1915 թ. հենց այդ օրն Անդրանիկի ջոկատում ստեղծվել է ռազմական ոստիկանության ստորաբաժանում:*

«Անդրանիկի պատասխանը Նուրի փաշայի գրպարտություններին 1918 թ.» զեկուցման մեջ պ. գ. թ. Համո Սուքիասյանն *անդրադարձավ 1918 թ. ամռանն ու աշնանը հայությանն ուղղած Նուրի փաշայի կոչերին ու դրանցում զորավար Անդրանիկին վերաբերող գրպարտություններին: Թուրք զինվորականը Սյունիքի, Արցախի և Գանձակի հայերին հորդորում էր «հեռու մնալ» Անդրանիկից և հպատակվել Ադրբեջանին՝ հակառակ դեպքում սպառնալով կազմակերպել նոր կոտորածներ: Զեկուցողը նշեց, որ Անդրանիկն անպատասխան չթողեց այդ «հորդորները» և 1918 թ. հոկտեմբերի 13-ին Նուրի փաշային ուղղված պատասխան գրությամբ հայտնեց, որ ինքը բազմաթիվ ճակատամարտերում պարտության է մատնել թուրքական զորքերին և նույն հեռանկարն է խոստանում նաև իրեն:*

Ընդմիջումից հետո գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում: Երկրորդ նիստում (նիստավար՝ Պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի վարիչ Ռ. Սահակյան*) ընթերցվեց 6 զեկուցում:*

«Արցախցիների նամակներն Անդրանիկին» վերնագրով զեկուցման մեջ պ. գ. դ. Հրանտ Աբրահամյանը *փաստեց, որ Արցախի հայերը համոզված էին, որ երկրամասում Անդրանիկի ներկայությունը կսաստեր թուրքերին ու թաթարադրբեջանցիներին: Դրա վառ ապացույցն են 1918 թ. աշնանն արցախահայության՝ Անդրանիկին ուղղված բազմաթիվ նամակները:*

Պ. գ. դ. Գայանե Մախմուրյանի *զեկուցման թեման էր «Արևմտահայ դիվիզիան և ԱՄՆ քաղաքականությունը 1917–1918 թթ.»: Նա նշեց, որ, արտահայտելով ԱՄՆ ղեկավար շրջանների տեսակետը, ամերիկյան հյուպատոս Ա. Սմիթը 1917 թ. մայիսի վերջին ցանկանում էր արևմտահայերից բաղկացած դիվիզիա ստեղծել: Սակայն այդ փորձը հաջողություն չունեցավ:*

Պ. գ. դ. Վլադիմիր Պետրոսյանը *«Ստեփան Շահումյանի և Անդրանիկի հարաբերությունները» խորագրով զեկուցման մեջ անդրադարձավ Անդրանիկի տպագրած «Հայաստան» թերթում Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ս. Շահումյանի գործունեության լուսաբանմանը, նաև 1918 թ. հուլիսի 14-ին Ս. Շահումյանին ուղղված Անդրանիկի հայտնի հեռագրին: Զեկուցողը կարծիք հայտնեց, թե հնարավոր չէ, որ Անդրանիկը և Ս. Շահումյանը Թիֆլիսում միաժամանակ գտնվելու ընթացքում միմյանց հանդիպած չլինեին:*

«Անդրանիկը և արևմտահայ փախստականների ներգաղթի խնդիրը 1919 թ. ապրիլին» վերնագրով զեկուցման մեջ պ. գ. թ. Կարեն Հայրապետյանը *նշեց, որ Անդրանիկը հատուկ կարևորում էր 1919 թ. գարնանն արևմտահայ գաղթականների՝ սեփական բնակավայրեր ներգաղթելու հարցը: Նույնիսկ ՀՀ ղեկավարների հետ ունեցած խորը տարաձայնությունների պայմաններում նա Արևմտահայ գործադիր մարմնի նախագահ Վարագդատ Տերոյանին համոզում էր այդ նպատակով համագործակցել նրանց հետ:*

Պ. գ. թ. Քնարիկ Ավագյանի *զեկուցման թեման էր «Զորավար Անդրանիկի գործունեությունը ԱՄՆ-ում և ամերիկահայությունը»: Նա անդրադարձավ զորավարի Եվրոպայում (Ֆրանսիա, Անգլիա), ապա՝ ԱՄՆ-ում ծավալած հասարակական, քաղաքական, հանգանակիչ գործունեությանը: Զեկուցողը մանրամասն ներկայացրեց ԱՄՆ-ում Անդրանիկի մասնակցությունն Ազգային պատվիրակության կազմակերպած Զինվորական առաքելությանը (1919 թ. նոյեմբեր) և «Փրկության հանգանակությանը» (1920–1921 թթ.), որոնք կոչված էին սատարելու հայ կարոտյալներին ու նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը, ինչպես նաև՝ օտարության մեջ Անդրանիկ Օզանյանի գրած հուշագրություններին, որոնք ուսանելի պատգամ են հաջորդ սերունդներին:*

Կամո Առաքելյանը *«Անդրանիկ Օզանյան» խորագրով զեկուցման մեջ համառոտ ներկայացրեց Անդրանիկի գործունեությունը՝ հատուկ շեշտելով հայ ազատագրական-հայդուկային պայքարում նրա ունեցած ներդրման մասին: Զեկուցողն առանձնահատուկ անդրադարձավ Անդրանիկի մարտական հրահանգներին, որոնք զինվորականների համար այսօր ևս կարող են ուղեցույց լինել:*

Զեկուցումների ավարտից հետո տեղի ունեցավ արդյունավետ գիտական քննարկում: Ռ. Սահակյանն ամփոփելով գիտաժողովի արդյունքներն՝ ընդգծեց այն հանգամանքը, որ զեկուցումները վերաբերում էին Անդրանիկի գործունեության գրեթե բոլոր դրվագներին (սկսած հայդուկային պայքարից՝ մինչև կյանքի վերջին տարիները ԱՄՆ-ում):

Գիտաժողովում ընթերցված զեկուցումները կհրատարակվեն առանձին ժողովածուի մեջ:

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ,
ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ